# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 05-Ի N 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

***Հաստատել նիստի հետևյալ օրակարգը***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 76-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող համայնքների սուբվենցիոն ծրագրերին մասնակցելու և մասնակցության հայտ ներկայացնելու համար Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 82-Ա և 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 65-Ա որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 64-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, տուֆագործների փողոցի աջակողմյան հատվածում /Նախկին պիոներական ճամբար տանող ճանապարհի/ գտնվող 0,45827հա մակերեսով արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու եվ, հողատարածքի հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 18-ի թիվ 6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Արթիկ համայնքի բնակիչ Գյուլնարա Մխիթարյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման համաձայն բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում հաշվառելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից ուղղակի վաճառքով <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը հողատարածք օտարելու և օտարման գին հաստատելու մասին: /զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
10. Արթիկ համայնքի Անկախության փողոց 40/17 հասցեում ինքնակամ շինութան և դրա պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 4-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 66-Ն որոշման 3-րդ հավելվածի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/զեկուցող՝ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան — Բզնունի Կորյուն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ — Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ — Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ — Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ն

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 76-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները

1) Ճանապարհային տրանսպորտ բաժնի

ա. <<Նախագծահետազոտական ծախսեր>> (5134) հոդվածում գրված <<3000000 երեք միլիոն>> թիվը և բառերը փոխարինել <<6500000 վեց միլիոն հինգ հարյուր հազար>> թվով և բառերով:

բ. <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<90000 իննսուն հազար>> թվով և բառերով:

2) Փողոցների լուսավորում բաժնի

ա.<<Շենքերի և շինությունների շինարարություն>> (5112) հոդվածում գրված <<35000000 երեսունհինգ միլիոն>> թիվը և բառերը փոխարինել <<31100000 երեսունմեկ միլիոն մեկ հարյուր հազար>> թվով և բառերով:

բ. <<Նախագծահետազոտական ծախսեր>> (5134) հոդվածում գրված <<2000000 երկու միլիոն>> թիվը և բառերը փոխարինել <<900000 ինը հարյուր հազար>> թվով և բառերով:

3) Աղբահանում բաժնի <<Կոմունալ ծառայություններ>> (4213) հոդվածում գրված <<42279000 քառասուներկու միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար>> թիվը և բառերը փոխարինել <<30279000 երեսուն միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար>> թվով և բառերով:

4) Շրջակա միջավայրի պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ բաժնի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական/համայնքային/ կազմակերպություններին>> (4511) հոդվածում գրված <<21010000 քսանմեկ միլիոն տաս հազար>> թիվը և բառերը փոխարինել <<33010000 երեսուներեք միլիոն տաս հազար>> թվով և բառերով:

5) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի <<Նախագծահետազոտական ծախսեր>> (5134) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<1500000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար>> թվով և բառերով:

6) Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի <<Այլ նպաստներ բյուջեից>> (4729) հոդվածում գրված <<4810000 չորս միլիոն ութ հարյուր տաս հազար>> թիվը և բառերը փոխարինել <<5460000 հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար>> թվով և բառերով:

7) ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<135384000 մեկ հարյուր երեսունհինգ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար>> թիվը և բառերը փոխարինել <<134644000 մեկ հարյուր երեսունչորս միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար>> թվով և բառերով:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Բզնունի Կորյուն |
| Ղուկիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Գասպարյան Վաղարշակ | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Տալ համաձայնություն Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու և մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը հետևյալ ծրագրերի համար.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Ղուկասյան փողոցի և Տուֆագործների առաջին նրբանցքի տուֆ քարով սալիկապատման աշխատանքներ:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պռոշյան փողոցի և Գարեգին Նժդեհ 1-ին նրբանցքի հիմնանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության ցանցի կառուցում և արդիականացում:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենայի ձեռքբերում:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Բզնունի Կորյուն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Գասպարյան Վաղարշակ | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 82-Ա ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1, 2, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 82-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Թիվ 82-Ա որոշման հավելվածում <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Պաշտոնային դրույքաչափ» սյունակի 1-ին կետում գրված <<150000 (մեկ հարյուր հիսուն հազար)>> թիվը և բառերը փոխարինել <<200000 (երկու հարյուր հազար)>> թվով և բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2021 թվականի կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 65-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Թիվ 65-Ա որոշման հավելվածում <<Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում ավելացնել <<Հավաքարար-համայնքի փողոցների սանիտարական մաքրման համար/ 4 հաստիք -

150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ>> դրույքաչափով և <<Վարորդ 1 հաստիք - 110000 (մեկ հարյուր տաս հազար)>> դրամ դրույքաչափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 15-ից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Բզնունի Կորյուն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

05 մարտի 2021թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1, 2, 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 64-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Թիվ 64-Ա որոշման 3-րդ կետի 2-րդ հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել <<Հարկային գործակալ 1 հաստիք - 100000 (մեկ հարյուր հազար) դրամ>> դրույքաչափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 15-ից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան — Բզնունի Կորյուն

Ղուկիջօղլյան Ռաֆիկ — Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ — Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ — Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 05 մարտի 2021թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 4-րդ բաժնի 12-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> թիվ 63-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի անդամ Մեսրոպ Վարագյանի փոխարեն հանձնաժողովում որպես անդամ ընդգրկել Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթևիկ Աղաքարյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2018թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 63-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 13-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի անդամ Թագուհի Ղազարյանի փոխարեն հանձնաժողովում որպես անդամ ընդգրկել ոստիկանության Արթիկի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնությունների կանխարգելման բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան Լուսինե Կուրղինյանին:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան Բզնունի Կորյուն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 67-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում Արթիկ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին՝ 340000 (երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և Արցախա-ադրբեջանական շփման գոտում 2020թվականի սեպտեմբերի 27-ից սկսված մարտական գործողությունների հետևանքով գերեվարված ընտանիքին՝ 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Բզնունի Կորյուն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Գասպարյան Վաղարշակ | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի

մարտի 05-ի թիվ 16-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

| հ/հ | Ազգանուն,Անուն,Հայրանուն | Գումարը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Բոթոյան Վերա Սասունիկի | 10 000 |
| 2. | Բոթոյան Վարդան Գևորգի | 10 000 |
| 3. | Դանիելյան Սևակ Արամի | 10 000 |
| 4. | Հաջաթյան Գոհար | 10 000 |
| 5. | Սանթոյան Աիդա Վրույրի | 10 000 |
| 6. | Երիցյան Սիմիզար Հակոբի | 10 000 |
| 7. | Օհանովա Յասմեն Ասատուրի | 10 000 |
| 8. | Համբարյան Քրիստինե Հայկի | 10 000 |
| 9. | Եղոյան Լուսինե Արմենի | 10 000 |
| 10. | Դանիելյան Վերգուշ Մինասի | 10 000 |
| 11. | Պետրոսյան Աjծեմնիկ Հմայակի | 10 000 |
| 12. | Ջուռնաչյան Մանվել Սարգսի | 10 000 |
| 13. | Աթանեսյան Գայանե Մկրտիչի | 10 000 |
| 14. | Կարախանյան Սոֆիկ Մուշեղի | 10 000 |
| 15. | Կարախանյան Աստղիկ Սենոյի | 10 000 |
| 16. | Աղաջանյան Սաթիկ Ավետիքի | 10 000 |
| 17. | Հակոբյան Համլետ Արտաշի | 10 000 |
| 18. | Աստոյան Լաուրա Իշխանի | 10 000 |
| 19. | Մնացականյան Հայկ Անդրանիկի | 10 000 |
| 20. | Մահորյան Մամիկոն Ալբերտի | 10 000 |
| 21. | Աղոյան Բավական Գևորգի | 10 000 |
| 22. | Հովհաննիսյան Նվարդ Հակոբի | 10 000 |
| 23. | Վարդանյան Լեյլի Վոլոդյա | 10 000 |

| | | |
|---|---|---|
| 24. | Չոփիկյան Սուսաննա Մկրտիչի | 10 000 |
| 25. | Ղազարյան Սիրվարդ Մկրտիչի | 10 000 |
| 26. | Սարգսյան Սուսաննա Ռոբերտի | 10 000 |
| 27. | Աղաջանյան Գայանե Գարեգինի | 10 000 |
| 28. | Գաբրիելյան Ջենֆերա Ստեփանի | 10 000 |
| 29. | Թադևոսյան Լավրենտի Հմայակի | 10 000 |
| 30. | Ղազարյան Անի Ռադիկի | 10 000 |
| 31. | Հարությունյան Գրետա Գարեգինի | 10 000 |
| 32. | Հարությունյան Անահիտ Սարգսի | 10 000 |
| 33. | Օզմանյան Ալվարդ Մաթևոսի | 10 000 |
| 34. | Մաթևոսյան Սուսան Սարգսի | 10 000 |
| | **Ընդամենը** | **340000** |

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԸՆՏԱՆԻՔԻ

| | | |
|---|---|---|
| 35. | Մինասյան Վարդ Գառնիկի | 50000 |
| | **Ընդամենը** | **390000** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17-Ն

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻՑ, ՏՈՒՖԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ /ՆԱԽԿԻՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ/ ԳՏՆՎՈՂ 0,45827ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ՝ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերով, 76-րդ հոդվածի 1-ին կետով, 94-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 47-րդ, 49-րդ կետերով,63-րդ կետի բ ենթակետով և հիմք ընդունելով Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26052020-08-0013 վկայականը տրված 08 փետրվարի 2021թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1.**Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 0,45827հա մակերեսով արոտավայրը /կադաստրային ծածկագիր 08-002-0258-0039 /մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով 3 տարի ժամկետով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով վարձակալությամբ տրամադրելու առաջարկությանը:

**2.**Հողամասի վարձակալության վճարի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ 1հա-ի համար 2750 Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Հողամասը հրապարակային սակարկությունների միջոցով վարձակալությամբ տրամադրելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով համայնքի ղեկավարի գլխավորությամբ:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան — Բզնունի Կորյուն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ — Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ — Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ — Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՅՈՒԼՆԱՐԱ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի բնակիչ Գյուլնարա Մարտինի Մխիթարյանը դիմել է Արթիկ համայնքի ղեկավարին բնակարան ստանալու համար:

Գյուլնարա Մարտինի Մխիթարյանի որդին՝ Վիտալի Աշոտի Իգիթյանը զոհվել է ծառայության ընթացքում՝ 2014թվականի հոկտեմբերին 10-ին: Գյուլնարա Մխիթարյանը և իր ամուսինը չեն աշխատում, չունեն անձնական բնակարան: Բնակվում է ամուսնու հետ մյուս որդու տանը:

Հիմք ընդունելով վերը շարադրված փաստական հանգամանքները, գտնում ենք, որ քաղաքացի Վիտալի Աշոտի Իգիթյանի մայր Գյուլնարա Մխիթարյանին պետք է վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման դրույթներով Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արթիկ համայնքի Ավագանու 2021թվականի հունվարի 18-ի թիվ 6-Ա որոշումը:
2. Ծառայության ընթացքում զոհված Վիտալի Աշոտ Իգիթյանի մայր Գյուլնարա Մխիթարյանին ճանաչել անօթևան և վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված բնակարանային պայմանների բարելավման նպատակով շահառուների ցուցակում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան — Բզնունի Կորյուն

Ղուկիջօղլյան Ռաֆիկ — Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ — Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ — Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք, 05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ <<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ համայնքի ղեկվարին է դիմել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից լիազորված անձ Մ. Թորոսյանը, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող բնակարանի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,02000 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարելու նպատակով: Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ համայնքի Աղաքարյան փողոց 2-րդ նրբանցք 25 շենք, 1 բնակարանի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,02000 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ կետերով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 6-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30072020-08-0040 վկայականը տրված 30 հուլիսի 2020թվականին և <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից լիազորված անձ Մ. Թորոսյանի 2021թվականի փետրվարի 15-ի թիվ 297 դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1.**Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Աղաքարյան փողոց 2-րդ նրբանցք 25 շենք, 1 բնակարանի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,02000 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**2.**Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 2887,5 դրամ՝ 577500 (հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր դրամ) Հայստանի Հանրապետության դրամ ընդհանուր արժեքով:

**3.**Պարտավորեցնել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը համայնքապետարանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր, որի վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությա հաշվին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարազյան Մեսրոպ

Գասպարյան Վաղարշակ

Բզնունի Կորյուն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

**ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 40/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Արթիկ համայնքի ղեկավարի 2021թ.փետրվարի 23-ի թիվ 48-Ա որոշմամբ, Արթիկ համայնքի Անկախության փողոց 40/17 հասցեում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում Վահագն Լավրենտի Թադևոսյան կողմից ինքնակամ կառուցված 0.40 քմ արտաքին մակերեսով սյուներ գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 09032021-08-00/:

Գնման նախապատվության իրավունքով ընդհանուր 0.40քմ մակերեսներով սյուները և դրա պահպանման ու սպասարկման համար անհրաժեշ 0,00750 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու գրավոր առաջարկ է կատարվել կառույցն իրականացրած անձ Վահագն Լավրենտի Թադևոսյանին:

Արթիկ համայնքի ղեկավարը ինքնակամ կառուցված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ուղղակի վաճառքով Վահագն Լավրենտի Թադևոսյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցման:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1.1 մասով, 81-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Արթիկի քաղաքային համայնքի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը, հաշվի առնելով, որ տարածքը չի գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1.**Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անկախության փողոց 40/17 հասցեում ինքնակամ կառուցված ընդհանուր 0.40քմ մակերեսներով

սյուները և դրանց պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,00750 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Վահագն Լավրենտի Թադևոսյանին օտարելու Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**2.**Հողատարածքի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 810 դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1***

**Կողմ՝ 7**

Բզնունի Կորյուն

Հակոբյան Հարություն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ

**Ձեռնպահ՝ 1**

Վարդանյան Ոսկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ավագանու 2021թվականի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի 2021թվականի բյուջեի այլ մշակութային կազմակերպություններ բաժնի ,,Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' (4239) հոդվածում նախատեսված գումարից հատկացումներ կատարելու մասին>> թիվ 4-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Թիվ 4-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում գրված <<Տուֆաշխարհի ծմեռ- 1300000 մեկ միլիոն երեք հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<700000 յոթ հարյուր հազար>> թվով և բառերով:

2) Թիվ 4-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում գրված <<Կանանց միջազգային տոն - 600000 վեց հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<800000 ութ հարյուր հազար>> թվով և բառերով :

3) Թիվ 4-Ա որոշման մեջ ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

ա. Մայրության և գեղեցկության տոն - 400000 (չորս հարյուր հազար դրամ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Բզնունի Կորյուն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարազգյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Գասպարյան Վաղարշակ | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
05 մարտի 2021թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Ա

Արթիկ համայնք 05 մարտի 2021թվական

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 66-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾ Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 հունիսի 2020թվականի թիվ 1023-Ն որոշման 1-ի մասի 1-ի, 2-րդ, 3-րդ կետերով, հիմք ընդունելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 66-Ն որոշման 3-րդ հավելվածի 1-ի մասի 1)-ի կետի ա ենթակետում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները. <<1-ին գոտի 810>> բառերը և թվերը փոխարինել <<11-րդ գոտի 5000>> բառերով և թվերով, <<2-րդ գոտի 528>> բառերը և թվերը փոխարինել <<12-րդ գոտի 3000>> բառերով և թվերով և լրացնել <13-րդ գոտի 2000> բառերը և թվերը, իսկ բ ենթակետում գրված <<1-ին գոտի 5000>> բառերը և թվերը փոխարինել <<11-րդ գոտի 5000>> բառերով և թվերով, <<2-րդ գոտի 4000>> բառերը և թվերը փոխարինել <<12-րդ գոտի 3000>> բառերով և թվերով և լրացնել <<13-րդ գոտի 2000>> բառերը և թվերը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 7 դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 7**

Բզնունի Կորյուն

Հակոբյան Հարություն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ

**Դեմ՝ 1**

Վարդանյան Ոսկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 05 մարտի 2021թվական